

**«Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարի՝ 2021 թվականի հոկտեմբերի 11-ի N
76-Ն հրամանում լրացում կատարելու մասին»
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարի հրաման**

**ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 76-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և
34-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջով՝

ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ

1. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021
թվականի հոկտեմբերի 11-ի՝ «Նախադպրոցական հաստատություններ
սաների ընդունելության կարգը սահմանելու մասին» N 76-Ն հրամանի
հավելվածը լրացնել նոր՝ 1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«22.1. Սույն կարգի 22-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ժամկետում չեն
ներառվում երեխայի հսկողությունն իրականացնող առողջության առաջնային
պահպանման բժշկական կազմակերպության կողմից տրված՝ սահմանված ձևի
փաստաթղթի հիման վրա հիվանդության պատճառով չհաճախած օրերը, բայց
ոչ ավելի, քան տվյալ ուսումնական տարվա ընթացքում 21 օր:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից և տարածվում է 2022 սեպտեմբերի 1-ից հետո
ծագած հարաբերությունների վրա:

ՆԱԽԱՐԱՐ՝

Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ